Մեծ Այրում

Մակերես՝ 22.56 կմ^2

Բնակչություն՝ 986

Մեծ եւ փոքր Այրում գյուղերը գտնվում են ծովի մակարդակից 780 մ բարձրության վրա: Գյուղի կլիման բարեխառն է, աճում են բացի ցիտրուսային բույսերից, ամեն ինչ: Համայնքում կա 282 առանձնատուն:
Քանի որ ոռոգման ջուրը մղվում է պոմպերով, հաճախակի խափանումներ են լինում. համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ. մթերքների արտադրությունը: Հիմնականում զբաղվում են հացահատիկային մշակաբույսերի եւ մասամբ՝ կարտոֆիլի, բանջարեղենի եւ մրգի արտադրությամբ՝ հիմնականում հույսը դնելով եղանակի վրա:
Անասնապահությամբ զբաղվողները նույնպես մեծ դժվարությամբ են անասնակեր կուտակում երաշտի տարիներին: Կերի անբավարարության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:
Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, վերջին տարիներին վերանորոգված, բարվոք վիճակում, ուր սովորում է 125 աշակերտ: